

ՆԳ 2663



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար



Հակոբ Սիմիոյան

«07» 03 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 057 - 25

Նախաձեռնող՝

«Արոսա» ՍՊԸ
ք. Երևան, Ուլենցի 31/4

Գործունեությունը՝

Վեղի բնակավայրում ավագ դպրոցի կառուցում
Արարաբի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 057 - 25

«07» Մայրիսի 2025թ.

Վեդի բնակավայրում ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Արոսա» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Վեդի համայնք, Վեդի բնակավայր

Ներածական մաս. «Արոսա» ՍՊԸ-ի նպատակը Վեդի բնակավայրում ավագ դպրոցի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ անհատույց օգտագործման:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Արարատի մարզի Վեդի համայնքի վարչական տարածքում՝ Վեդի բնակավայրում:

Տեղանքը գտնվում է զարգացած համայնքային միջավայրում և բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել Վեդու դպրոցի տարածքում:

Նախատեսվող գործունեության տարածքը կառուցապատված է, նոր դպրոցը կկառուցվի վկայականով տրված հողամասի սահմաններում, որի կառուցումից հետո գոյություն ունեցող դպրոցի շենքը կապամոնտաժվի:

Կառուցվող դպրոցի տարածքում չկան որևէ էնդեմիկ կամ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանական տեսակներ, բացակայում են տարածքով անցնող միգրացիոն



ուղիները, չեն հայտնաբերվել պամամշակութային արժեք ներկայացնող կոթողներ, հուշարձաններ և արձաններ:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է կառուցել երկհարկանի նկուղային հարկով, 432 աշակերտի համար նախատեսված դպրոց: Առաջին հարկում կլինեն 10-12 դասարանների համար 2-ական լսարաններ, նախադպրոցական դասարան, գրադարան, համակարգչային տեխնիկայի, ռազմագիտության, աշխատանքի ուսուցման կաբինետներ, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներ իրենց ընդունարանով, բժշկի սենյակ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետ, սպորտդահլիճ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարան և խոհանոց, 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ, սանհանգուց հաշմանդամների համար:

Նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Մուտքային գոտուն կից տեղակայված կլինեն հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչ, ծնողների համար սպասարահ, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Երկրորդ հարկում նախատեսվում են նաև պատշգամբներ, լսարաններ, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոն, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, կենսաբանության քիմիայի ֆիզիկայի մասնագիտացված լսարաններ՝ իրեն կից լաբորատորիաներով, հանդիսությունների դահլիճ՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Դպրոցի բակային տարածքում նախատեսվում է բաց մարզադաշտ, մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ:

Դպրոցի շենքի տանիքին նախատեսվում է տեղադրել 127 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 232 հատ միաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներից: Շենքի տանիքն իրականացվելու է հարթ՝ կազմակերպված ջրահեռացմամբ:

Նախատեսվող դպրոցի տեխնիկական տեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերեսը՝ 27652 մ²,
- նոր հիմնական մասնաշենք՝ 3485 մ²,
- կանաչապատում՝ 18700 մ²,
- անջրանցիկ տարածքը՝ մոտեցումներ, սալվածքներ, անցուղիներ և ցանկապատ՝ 5407 մ²,
- նոր կաթսայատուն 60,0 մ² 0,002%,

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ:

Դպրոցն ապահովված է լինելու հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով, ելքերով և այլն:

Դպրոցի կառուցման աշխատանքներում հաշվի են առնված ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները՝ ըստ ՀՀ շինարարական նորմերի: Հաշվի առնելով, որ դպրոցը գործող է, տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման գծերը հետևաբար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:



Դպրոցի ջեռուցումը և օդափոխությունը նախատեսվում է գործող շինարարական նորմերի համապատասխան: Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր՝ մեխանիկական դրդմամբ:

Դպրոցի նոր կառուցվող շենքի էլեկտրամատակարարումը կիրականացվի ՀՀՇՆ22-03-17, ՍՆԻՊ 3.05.06-85 դրույթներին համապատասխան:

Ջերմամատակարարումը իրականացվելու է դպրոցին կից նախատեսվող նորակառույց կաթսայատնից: Առաջին հարկում նախատեսված են 10 մ³ ծավալով ռեզերվուարներ՝ խմելու ջրի և հրդեհամարման կարիքների համար:

Անձրևաջրերը կհավաքվեն ոռոգման համար նախատեսված 46 մ³ ընդհանուր ծավալով 2 ջրի ռեզերվուարներում և կօգտագործվեն դպրոցի կանչապատ գոտիների ոռոգման համար:

Կառուցապատումից ազատ մնացած տարածքները կբարեկարգվեն և կկանաչապատվեն:

Շինարարության փուլում նախատեսվում հատել 15-16 ծառ: Նախատեսվում է հատվող ծառերի փոխարեն դպրոցի բարեկարգվող կանաչապատ տարածքում նոր դեկորատիվ ծառերի տնկում 1-ին 15 հարաբերկցությամբ, տարածքի 67,6%-ը նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով: Դպրոցի տարածքի կանաչապատման աշխատանքները կիրականացվի հաշվի առնելով Կառավարության 2018թ. փետրվարի 8-ի N108-Ն որոշմամբ բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները: Նորատունկ բուսականության խնամքը հետագայում կիրականացվի դպրոցի կողմից, ինչը կներառի նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումները, որի ընթացքում կպաշտպանվեն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով: Նախատեսվում է ամբողջ տարածքի կանաչ գոտիների համար ոռոգման համակարգ, ինչը կիրականացվի ճկախողովակներով:

Շինարարություն իրականացվող տարածքի լիցքային գրունտերի հողաբուսական շերտը՝ շուրջ 1250 խմ ամբողջությամբ օտգործվելու է տարածքի կանաչապատման համար: Ընդհանուր հողային հանույթի ծավալը կկազմի 14200 խմ է, որից 1960 խմ կօգտագործվի հիմքերի հետլիցքի, իսկ 12240 խմ՝ տարածքի համահարդեցման և նշաբերման համար: Հիմքերի տակ իրականացվելու է բարձիկ կոպճավազային շերտով շուրջ 5200 խմ ծավալով:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում կապված են՝ կլիմեն փորման բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման, բետոնային աշխատանքների հետ, արտանետումների աղբյուրներ կհանդիսանան ցեմենտի, փոշու արտանետումները՝ հիմքերի փորման ընթացքում, դիզելային վառելիքի արտանետումները՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային, ջրային ռսուրսներ, մթնոլորտային օդ) պահպանության համար բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնցից են՝

- շինությունների ծածկում անթափանց թաղանթով, համապատասխան բարձրության,
- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում,



- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,
- ջրցանի ծավալների այնպիսի հաշվարկվում, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը կբավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում,
- շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար ախատեսված հատվածներում ավազի կամ մանրախիճի տեղադրում, մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքերի դեպքում, փոված ավազի կամ մանրախիճի տեղափոխում համապատասխան աղբավայր և այն փոխարինում նորով և այլն:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Իրականացվող աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված բնապահպանական միջոցառումները ներառված են գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում և բնապահպանական կառավարման պլանում:

Ավազ դպրոցի կառուցման ընթացքում առաջացող թափոնատեսակները կլինեն կենցաղային չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի), չաղտոտված հողային զանգված, շինարարական աղբը, որոնց հեռացումն ու տեղափոխումը կիրականցվի շին. թույլտվությամբ սահմանված և համայնքի հետ համաձայնեցված վայր: Ապամոնտաժումից առաջացած և հետագայում օգտագործման համար պիտանի նյութերը՝ որպես երկրորդային շինանյութեր կօգտագործվեն այլ շինարարական աշխատանքներում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների առաջացումը կապված կլինեն շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, որոնց հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ որոնցից են՝ շին աշխատանքների ընթացքում մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով, շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, դրանց տեխնիկական նորմալ վիճակում շահագործում, անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործման բացառում, շինարարական աշխատանքների իրականացում ցերեկային ժամերին և այլն: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում են նաև մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ուղղված են շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակների /հրդեհի առաջացում, շահագործվող տեխնիկայի հետ վթարներ և այլն/ ազդեցությունների բացառմանն ու նվազեցմանը: Նախատեսված բնապահպանական միջոցառումները տրված են գնահատման հաշվետվությունում և բնապահպանական կառավարման պլանում:



Ավագ դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Նախատեսվող մշտադիտարկումների կետերի, եղանակների, գործիքային կազմի, հաճախականության վերաբերյալ տեղեկատվությունն առավել մանրամասն ներկայացված է գնահատման հաշվետվության բնապահպանական միջոցառումների մշտադիտարկումների պլանում:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Վեդիի համայնքապետարանում անցկացված հանրային լսումների ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, Վեդիի համայնքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել « օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի



N108-Ն որոշման պահանջներին համապատասխան: Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Վեդիի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ հաստատված «Բարեկարգման, արդիականացման և կանաչապատման» նախագծին համապատասխան:

4. Դպրոցի տարածքում առկա բարձրավոլտ հաղորդալարերի տեխսփոխումը իրականացնել համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների:

5. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Արոսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վեդի բնակավայրում ավագ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիբյան